Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

Հետազոտական աշխատանք

Դպրոց՝ «Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Անգլերեն

Թեմա՝ «Միջառարկայական կապերի հաստատումը անգլերենի դասավանդման գործընթացում»

Մենթոր՝ Նաիրա Անանյան

Ուսուցիչ՝ Նախշուն Խալափյան

2023

Բովանդակություն

1. Ներածություն_____էջ 3-6

2. Միջառարկայականության կամ ինտեգրման սկզբունքը_____էջ 7-12

2.1 Միջառարկայական կապերի տեսակները

2.2 Գրականության ակնարկ

3. Հիմնական մաս_____ էջ 13-14

4.Փորձարարական մաս_____էջ 15-22

4.1. Դաս 1

4.2. Դաս 2

5. Եզրակացություն/առաջարկություն_____էջ 23-24

6. Օգտագործված գրականության ցանկ և հղումներ_____ էջ 25

1.Ներածություն

«Այն ամենը, ինչը փոխադարձաբար կապված է, այդպիսի կապի մեջ էլ պետք է դասավանդվի»: Յան Ամոս Կոմենսկի

Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են:

Միջառարկայական ուսուցում ասելով հասկանում ենք իմաստով և ձևով միմյանց լրացնող տարբեր առարկաների և ուսումնական նյութերի ամբողջությունը:

Միջառարկայական կապերը պետք է նպատակաուղղված լինեն օբյեկտիվ աշխարհի բաղկացուցիչ մասերի եռամիասնության՝ բնություն-մարդ-հասարակություն հասկացության ըմբռնմանը:

Միջառարկայական կապը շարունակականության, սինթեզի, ինտեգրման միջոցով հարաբերությունների հաստատումն է երկու կամ ավելի առարկաների ուսումնական նյութերի կառուցվածքային տարրերի միջև: Դրանք երկու կամ ավելի առարկայական ոլորտներից միավորվում են մեկ իմաստային մոդուլի մեջ և օգտագործվում նյութի ուսումնասիրության կամ միջառարկայական խնդիրների լուծման գործընթացում:

Միջառարկայական կապն իրենից ենթադրում է նաև ուսուցման և դաստիարակության գործընթացների ինտեգրում ուսանողների կողմից հետազոտական աշխատանքների, նախագծերի մշակման միջոցով՝ գիտակրթական արդյունքները գործնականում ներմուծելու միջոցով:

Հարակից առարկաների հետ տվյալ առարկայի հարաբերությունների հաստատումն ընդլայնում է հիմնական գիտելիքների ծավալը, որն անհրաժեշտ է ծրագրային նյութի ըմբռնման և արդյունավետ յուրացման համար:

Աշակերտներին գրավիչ թվացող կիրառական առարկաների հետ ինտեգրումը հնարավորություն է տալիս հաջողությամբ մեծացնել կոնկրետ առարկայի նկատմամբ հետաքրքրությունը և զարգացնել այն ուսումնասիրելու մոտիվացիան:

Աշխարհի ճանաչողության միասնական մեթոդաբանական հիմքերի ապահովման նպատակով՝ առարկայի բովանդակությունը կառուցվում է 8 ընդհանրական հասկացությունների վրա: Դրանք այլ կերպ կոչվում են խաչվող հասկացություններ, որոնք առանցքային գաղափարներ են և ընդհանրական են տարբեր գիտությունների համար և օգնում են սովորողներին միավորելու տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները աշխարհի մասին մեկ ամբողջական պատկերացման շրջանակներում: Դրանք ապահովում են ուսուցանվող թեմայի կապը այլ առարկաների հետ: Առանձնացված են հետևյալ հասկացությունները՝

1. Օրինաչափություն - որոշակի սկզբունքով կրկնվող երևույթներ բնության և հասարակության մեջ:

2.Ժամանակ և տարածություն - Որտե՞ղ և ե՞րբ. տարբեր մարդկանց կենցաղը, անձնական պատմություն ները, ձեռքբերումները, դերը որոշակի ժամանակաշրջանում և վայրում:

3. Անհատական և մշակութային արժեհամակարգ - Անհատ – հասարակություն փոխկախվածությունը, մարդու ստեղծած արժեքների ազդեցությունը:

4. Կառուցվածք և գործառույթ - Ի՞նչ է, ինչի՞ համար է հարցերի միջոցով առարկաների, երևույթների ճանաչում և կիրառում ըստ նպատակի:

5.Պատճառ և հետևանք - Պատճառահետևանքային կապերը կյանքում, բնության մեջ, ուսումնասիրվող գրական և ոչ գրական տեքստերում:

6. Փոփոխություն և զարգացում - Բնության և հասարակության մեջ բնականորեն կամ ուղղորդված փոփոխությունները, որոնք ապահովում են զարգացում:

7. Կայունություն և փոփոխություն - Բնության մեջ, մարդկության պատմության մեջ մնայուն անփոփոխ և փոխվող, զարգացող երևույթները:

8. Անհատներ և հարաբերություններ - Ինքնաճանաչում, սեփական դերի գիտակցում, պարտականությունների ստանձնում և իրավունքների իրացում:

Սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլն ուշադրության կենտրոնացումն է: Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ:

Մարդու կարճաժամկետ հիշողության հնարավորությունները սահմանափակ են, այսինքն՝ մարդը չի կարող միանգամից շատ բան սովորել:

Ըստ գիտնականների՝ մարդը կարող է միանգամից սովորել լավագույն դեպքում 9-10 նոր բան: Որոշ գիտնականներ ավելի հոռետես են և համարում են, որ մարդը միանգամից կարող է սովորել 4-5 նոր բան: Այս հանգամանքը շատ կարևոր է, քանի որ դասերի ժամանակ հաճախ ականատես ենք լինում իրավիճակների, երբ կարճ ժամանակում աշակերտներին փոխանցվում են մի քանի տասնյակ նոր անուններ, եզրույթներ ու հասկացություններ:

Ի՞նչ կարելի է անել, որ աշակերտները հնարավորինս շատ բան սովորեն:Մասնագետները խորհուրդ են տալիս նոր նյութը սովորեցնել կապակցված: Խորհուրդ է տրվում օգտագործել գծապատկերներ, պատմություններ, որպեսզի աշակերտները կարողանան լավ յուրացնել նյութը: Այս առումով, որպեսզի աշակերտներն ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն: Ընդ որում՝ դա պետք է արվի կանոնակարգված և շարունակական ձևով: Այլ կերպ ասած՝ պետք է կարևորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգրկումը,այլև՝ խորությունը:

Թեմայի արդիականությունը՝

Ժամանակակից կրթական համակարգն ուղղված է բազմակողմանիորեն կրթված, ինտելեկտուալ զարգացած անհատի ձևավորմանը՝ աշխարհի պատկերի ամբողջական հայացքով և այդ պատկերը ներկայացնող երևույթների և գործընթացների միջև կապերի խոր ըմբռնմամբ: Միջառարկայական կապերը գործում են որպես ուսուցման և դաստիարակության միասնության պայման և խթանում են աշակերտներին կիրառել գիտելիքներն առօրյա կյանքում:

Այսպիսով, դպրոցական կրթության զարգացման ժամանակակից պայմաններում, դասավանդման առաջատար գաղափարներից մեկը միջառարկայական ինտեգրումն է, այսինքն՝ մի քանի ուսումնական դասընթացների բովանդակության փոխկապակցումը: Դրա իրականացման մեխանիզմը միջառարկայական կապերն են, որոնք ներառարկայական կապերի հետ միասին առարկայի դասավանդման մեթոդական կարևոր միջոցներից են:

Հետազոտության նպատակը՝

Ցույց տալ, որ միջառարկայական կապերի հաստատումը անգլերենի դասավանդման գործընթացում նպաստում է ուսումնական նյութի հեշտ յուրացմանը:

Հետազոտության խնդիրներն են.

- ուսուցանվող նյութը դարձնել հասկանալի և մատչելի՝ կապելով այլ առարկաների հետ
- կատարել խմբային աշխատանքներ, բաց քննարկումներ
- տարբեր առարկաներից ստացած գիտելիքները դարձնել մեկ ամբողջություն

Հետազոտական հարց՝ *Արդյո՞ք միջառարկայական կապերի հաստատումը խթանում է աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին:*

2.Միջառարկայական կապերի հաստատումը դասավանդման գործընթացում

«Գիտական սկզբունքներն ու օրենքները բնության մակերեսի վրա չեն գտնվում: Դրանք թաքնված են, և դրանք պետք է վերցվեն բնությունից՝ հետազոտման ակտիվ և ճարտար տեխնիկայի օգնությամբ»: Զոն Դյուի

Միջառարկայականության կամ ինտեգրման սկզբունքը

Այս ուսուցման սկզբունքը կենտրոնանում է դպրոցի կրթական պրակտիկայում միջառարկայական կապերի նպատակային և համակարգված օգտագործման վրա՝ նպատակներին արդյունավետ հասնելու և ուսումնական խնդիրների լուծման համար:

Դասապրոցեսում միջառարկայական կապերը կարող են օգտագործվել տարբեր փուլերում՝ ըստ ուսումնասիրվող նյութի բնույթի: Միջառարկայական կապերը կարելի է օգտագործել, օրինակ, խթանման փուլում՝ նախապատրաստական զրույցի միջոցով: Այս փուլում ուսուցիչը կարող է օգտագործել ուսումնասիրվող նյութի կապը այլ գիտությունների, առարկաների հետ՝ ավելի պարզ ու հստակ պատկերացում ձևավորելու բուն նյութի վերաբերյալ, «հող նախապատրաստելու» հիմնական նյութի յուրացման համար:

Միջառարկայական կապերի նպատակային օգտագործումը պետք է.

- պարտադիր լինի բոլոր ուսուցիչների համար,
- լինի միայն ուսումնական նպատակին հասնելու միջոց,
- գործադրվի միայն այն ժամանակ, երբ դրա անհրաժեշտությունը կա,
- ինքնանպատակ չլինի,
- զուգակցված լինի ուսուցման դասական ձևերի հետ,
- դասի հիմնական նպատակից չշեղի աշակերտների ուշադրությունը:

Սակայն միջառարկայական և ներառարկայական կապերի օգտագործումը ենթադրում է ուսուցչի պատրաստություն ոչ միայն գիտելիքների հաղորդման եղանակների, այլև հնարավոր ուղիների մասին:

Ուսուցման գործընթացում միջառարկայական կապեր ստեղծվում են տարբեր եղանակներով: Օրինակ՝ ուսուցիչը դասի ընթացքում նոր նյութը պատմելիս կամ բացատրելիս աշակերտներին հիշեցնում կամ հարցնում է, թե մյուս առարկաներից իրենք ինչ գիտեն տվյալ երևույթի վերաբերյալ: Ուսուցիչը, հիմնվելով աշակերտներին հայտնի գիտելիքների վրա, աշխատում է նոր նյութը կամ գիտելիքները հասկանալի դարձնել, ստեղծել ուսումնասիրվող երևույթի համակողմանի, ամբողջական պատկերացում:

Ուսումնական առարկաների փոխադարձ կապերի ապահովումը հրատապ խնդիր է: Հասկանալի է, որ առանց այդպիսի կապերի ապահովման, սովորողների գիտելիքները կլինեին անբավարար, իսկ դասավանդման հարցերն առանձնապես ոչինչ չէին ավելացնի ուսուցման արդյունավետությանը: Միջառարկայական կապերն ամենևին էլ չեն սահմանափակվում միայն մի քանի առարկաներով: Այդպիսի կապերը գոյություն ունեն համարյա բոլոր դպրոցական դասընթացներում: Չէ՞ որ օբյեկտիվորեն գոյություն ունեցող երևույթները և փաստերը կարող են ընկալվել ու ուսումնասիրվել միայն միմյանց և այլ երևույթների հետ փոխադարձ կապի և փոխգործողության մեջ:

2.1. Միջառարկայական կապերի տեսակները

Միջառարկայական կապերը նախ և առաջ բնութագրվում են իրենց կառուցվածքով և, քանի որ առարկայի ներքին կառուցվածքը համարվում է ձև, ապա կարող ենք առանձնացնել կապերի հետևյալ ձևերը.

1. ըստ կազմության

2. ըստ գործողության ուղղության

3. ըստ ուղղորդող տարրերի փոխգործողության ձևի

Ըստ կազմության՝ միջառարկայական կապերը ցույց են տալիս,թե ինչ է օգտագործվում, ձևափոխվում այլ ուսումնական առարկաներից՝ կոնկրետ թեմա ուսումնասիրելու ժամանակ:

Միջառարկայական կապերը, ըստ ուղղության, ցույց են տալիս,թե կոնկրետ ուսումնասիրվող ուսումնական թեմայի միջառարկայական հիմքը քանի ուսումնական առարկաներից է կազմված:

Ըստ ուղղորդող տարրերի փոխգործողության ձևի՝ միջառարկայական ինֆորմացիան օգտագործվում է երկու ձևով.

- ուղիղ կապեր - միայն բազային ուսումնական առարկայի կողմից ուսումնական թեմայի ուսումնասիրման ժամանակ,
- հակադարձ կամ վերականգնողական կապեր - տվյալ թեման համարվում է նույնպես ինֆորմացիայի ‹‹մատակարար›› այլ թեմաների և առարկաների համար:

Ըստ ժամանակային գործոնի՝ լայն տարածում ունի միջառարկայական կապերի հետևյալ դասակարգումը՝

- ուղեկցվող կամ հորիզոնական կապեր. պայմանավորված են երկու առարկաների համաժամանակյա տեղեկատվական նյութերով,

- նախորդող կամ ուղղահայաց կապեր. գործադրվում են ուսումնական տարվա համեմատաբար կարճ, բայց հաջորդական ժամանակաշրջաններում (քառորդներ, կիսամյակներ) երկու առարկաների տեղեկատվական նյութեր ուսումնասիրելիս,
- հեռանկարային կապեր. պայմանավորված են մի քանի առարկաների այնպիսի տեղեկատվական նյութով, որ գործում է առավել երկար ժամանակ՝ 1-3 տարի:

2.2. Գրականության ակնարկ

Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»:

Մի շարք հետազոտությունների (Օ. Լ. Ժուկ, Ս. Ն. Սիրենկո, Մ. Ն. Բերուլավա և այլն) վերլուծությունը հնարավորություն տվեց պարզաբանել միջառարկայական կապերի սահմանումը դպրոցական կրթության մեջ:

Դպրոցական կրթության մեջ միջառարկայական ինտեգրման խնդիրը վաղուց մշակվել է հետազոտողների կողմից: Նաև Յա.Ա. Կոմենիուսը նշել է.
«Այն ամենը, ինչ փոխադարձ կապի մեջ է, պետք է սովորեցնել նույն կապով»:
Ջոն Լոքը նաև կարծում էր, որ յուրաքանչյուր առարկա չպետք է դասավանդվի «մաքուր» ձևով, այն անպայման պետք է լցված լինի այլ առարկաների տարրերով: Մեծ մտածողների ներկայացված հայտարարություններն արդիական են նաև ժամանակակից պայմաններում, քանի որ անհատի առօրյայում անհրաժեշտ է լուծել մի շարք բարդ խնդիրներ, օրինակ՝ մշակման տեխնոլոգիա, ռեսուրսների ռացիոնալ օգտագործում, բնական միջավայրի պահպանում, առողջ ապրելակերպ, ընտանեկան բյուջեի պլանավորում, սոցիալ-մշակութային բազմազանության ընդունում, կազմակերպական բազմամշակութային փոխազդեցություն և այլն:

Ն.Կ. Կրուպսկայան առաջիններից էր, ով ընդգծեց դիալեկտիկական մեթոդի վրա հիմնված գիտելիքի միասնության անհրաժեշտությունը և քննադատեց բարդ ծրագրերը, որոնք արտացոլում էին ոչ թե կյանքում գոյություն ունեցող, այլ արհեստական կապերը:

Պ.Ն.Գրուզդևը, Պ.Ն.Շիմբիրևը, Ի.Տ.Օգորոդնիկովը, Մ.Ա.Դանիլովը, Բ.Պ.Եսիպովը և ուրիշներ բացահայտեցին միջառարկայական կապերի խնդրի

դիդակտիկ ասպեկտները: 50-ական թթ. միջառարկայական կապերի տեսությունը մշակվել է ուսանողների կրթական գործունեության բարձրացման տեսանկյունից (Բ.Գ. Անանիև և ուրիշներ):

XIX դարի սկզբին, Ռուսաստանում գիտական գիտելիքների աճող տարբերակման շնորհիվ, բարեփոխվեց նաև դպրոցական ծրագիրը, ինչը հանգեցրեց ակադեմիական առարկաների թվի ավելացմանը: Կ.Դ. Ուշինսկին բարեփոխումների պատճառներից մեկն անվանեց ակադեմիական առարկաների փոխկապակցվածության բացակայությունը: Նա առաջինն էր, ով տվեց միջառարկայական կապերի առավել ամբողջական հոգեբանական և մանկավարժական հիմնավորումը, պնդելով, որ «գիտելիքներն ու գաղափարները, որոնք փոխանցվում են ցանկացած գիտության, պետք է օրգանապես կառուցվեն աշխարհի և նրա կյանքի մասին լույսի և, հնարավորության դեպքում, լայն տեսարանի մեջ»: Գիտելիքների համակարգը, ըստ նրա, թույլ է տալիս բարձրանալ տրամաբանական և փիլիսոփայական բարձր շեղումների, իսկ գիտելիքի մեկուսացումը հանգեցնում է գաղափարների և հասկացությունների նվաստացման:

3. Հիմնական մաս

Օտար լեզվի, ինչպես նաև մյուս առարկաների ուսուցումը, պետք է ուղղված լինի աշակերտի ազատ դաստիարակությանը, ստեղծագործական հմտությունների զարգացմանը, ինքնահաստատմանը, ինքնուրույնության զարգացմանը, մրցակցայնությանը: Օտար լեզուների դասավանդման նպատակը հանդիսանում է հաղորդակցական կարողությունների ձևավորումը, ինչը զուգակցվում է սոցիալ-մշակութային գիտելիքների ձեռք բերմամբ, քանի որ անհնար է պատկերացնել հաղորդակցում՝ առանց հաշվի առնելու սոցիալ-մշակութային առանձնահատկությունները: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ օտար լեզվի ուսուցման մեջ առանձնահատուկ տեղ է գրավում տվյալ ազգի մշակույթի ուսումնասիրությունը:

Օտար լեզվի դասավանդումն ինքնին բարդ գործընթաց է և պահանջում է ժամանակ, քանի որ աշակերտը պետք է զարգացնի ունկնդրական, խոսակցական, ընթերցական և գրավոր մի շարք հմտություններ, ինչպես նաև միջնակարգ կրթության ութ կարողունակությունները.

1) լեզվական գրագիտություն և կարողունակություն
2) սովորել սովորելու կարողունակություն
3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
5) թվային և մեդիա կարողունակություն
6) մշակութային կարողունակություն
7) մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն.
8) տնտեսական կարողունակություն

Մեթոդիստներ Ի.Լ. Բիմը և Մ.Զ. Բիբոլետովան գտնում էին, որ օտար լեզվի ուսուցումը ինտեգրված համակարգում ուղղված է աշակերտների բազմակողմանի զարգացմանը, նրանց ընդհանուր կրթությանը և դաստիարակությանը, որին հնարավոր է հասնել միջառարկայական կապերի հաստատման միջոցով: Այս պարագայում միջառարկայական կապերի հաստատումը օգնում է աշակերտի մոտ ձևավորել աշխարհի մեկ ամբողջական պատկեր, որտեղ օտար լեզուն համարվում է հաղորդակցման, աշխարհը ճանաչելու միջոց: Այդ նպատակի իրականացման

համար ուսուցիչը ստեղծում է իրական կամ երևակայական իրավիճակներ, որտեղ խոսքի միջոցով աշակերտները հնարավորություն են ունենում զարգացնելու իրենց խոսքային հմտությունները:

Օտար լեզուների դասն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով առանձնացվում և կիրառում են աշխատանքային տարբեր հնարներ, քանի որ դժվար է տիրապետել լեզվին՝ չգտնվելով այդ լեզվով խոսող երկրում:

4.Փորձարարական մաս

Ներկայացնում եմ միջառարկայական կապերով հարուստ մի քանի դասի օրինակ, որոնք անցկացրել եմ 5-րդ դասարանում:

Դաս 1

Միջառարկայական կապերի հաստատման արդյունավետ ազդեցությունը ցույց տալու համար վերցրել եմ «Ուղևորություն» թեման:

Դասի թեման՝ «Ուղևորություն»

Նպատակը՝

- ներմուծել ուղևորության, երթևեկության միջոցների,երթևեկության կանոնների կարևորության և տեսարժան վայրերի պահպանման գաղափարը:
- Զարգացնել ուղևորությունների, տեսարժան վայրերի վերաբերյալ համատեքստում խոսքի կիրառելու հմտությունը:
- Ձևավորել հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի հանդեպ:

Միջառարկայական կապեր՝

- Մայրենի - Անգլերեն
- Կերպարվեստ - Անգլերեն
- Տեխնոլոգիա - Անգլերեն
- Ես և շրջակա աշխարհ - Անգլերեն
- Բնագիտություն - Անգլերեն
- ԹԳՀԳ - Անգլերեն

Խաչվող հասկացություններ՝ կանոններ և համակարգեր

Նախ կատարեցինք բառային աշխատանք ակտիվ բառապաշարի յուրացման և ամրապնդման համար: Տ-աձև աղյուսակի օգնությամբ ներկայացրի քերականական նյութը՝ անկանոն բայերը, ամփոփեցինք և ամրապնդեցինք այն՝ զարգացնելով լեզվական կարողունակությունը աշակերտների մոտ և հաստատելով միջառարկայական կապը **Մայրենիի** հետ:

Կատարեցինք խմբային աշխատանք, պատրաստեցինք պաստառներ՝ ներկայացնելով ՀՀ մարզերում գտնվող տեսարժան վայրերը:Այս աշխատանքի ժամանակ **«Կերպարվեստ», «Տեխնոլոգիա»** և **«ԹԳՀԳ»** առարկաների հետ միջառարկայական կապերը շատ արդյունավետ կերպով ազդեցին թե՛ կատարված աշխատանքի արդյունքի վրա և թե՝ աշակերտների ներգրավվածության: Դասին ակտիվ մասնակցում էին նաև ուսման մեջ թերացող աշակերտները:





Իմ առաջարկությամբ խմբի համատեղ առաջադրանքի արդյունքները ներկայացրեցին համեմատաբար ավելի թույլ աշակերտները, ինչը փաստեց, որ խումբը հասել է նպատակին, քանի որ ապահովվել է բոլոր աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին:

Պաստառների ներկայացման և քննարկման ժամանակ աշակերտները պարզ և հակիրճ նախադասություններով ներկայացրին մարզը, կլիմայական պայմանները, տեսարժան վայրերի աշխարհագրական դիրքը՝ հաստատելով միջառարկայական կապը անգլերենի և «**Աշխարհագրություն», «Բնագիտություն»** առարկաների միջև:

Թեմայի ավարտին կատարվեց ակտիվ քննարկում այն մասին, թե ինչպես կարելի է հոգատար վերաբերմունք դրսևորել սեփական և այցելվող երկրի տեսարժան վայրերի հանդեպ: Քննարկման ժամանակ աշակերտները ,համադրելով իրենց **«Ես և շրջակա աշխարհը»** և **«Անգլերեն»** առարկաներից ստացած գիտելիքները գեղեցիկ և սահուն կերպով մասնակցեցին քննարկմանը, կատարեցին խելացի եզրահանգումներ՝ այս կերպ խթանելով նաև մշակութային կարողունակության զարգացումը:

Այսպիսով՝ օգտագործելով միջառարկայական կապերն այլ առարկաների հետ, յուրաքանչյուր աշակերտի հնարավորություն տրվեց ավելի անկաշկանդ և ստեղծագործ ձևով ներկայացնել նյութը:

Դաս 2

Քանի որ ժամանակակից մանկավարժության մեջ փոփոխությունները ձևավորվում և զարգանում են նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով, ուստի «ԹԳՀԳ» առարկայի դերը և նշանակությունը շեշտելու նպատակով, ձեզ եմ ներկայացնում ևս մեկ դասի թեմա, որը համեմատելու, ուսումնասիրելու և հետազոտելու նպատակով անցկացրել եմ 5-րդ «ա» և 5-րդ «բ» դասարաններում:

Դասի թեման՝ «Փոքրիկ Կուղբը և Արծագանքը»

Նպատակը՝

- Ներմուծել և ամրապնդել թեմայի համապատասխան քերականական նյութը և թեմատիկ բառապաշարը:
- Ձևավորել հոգատար վերաբերմունք ընկերության և ընկերասիրության վերաբերյալ:

Միջառարկայական կապեր՝

Մայրենի - Անգլերեն

ԵՇԱ - Անգլերեն

ԹԳՀԳ - Անգլերեն

Ընդհանրական գաղափարներ՝ Անհատ և հարաբերություններ

5-րդ «ա» դասարանում թեման ուսումնասիրեցինք՝ կիրառելով «ԹԳՀԳ» - «Անգլերեն» միջառարկայական կապը: Դասն անցկացրեցինք համակարգչային դասասենյակում:

Նախ աշակերտները կարդացին հեքիաթի առաջին երկու մասերը, այնուհետև փորձեցին գուշակել հեքիաթի ավարտը: Մեծ էկրանով մուլտֆիլմը դիտելուց հետո համեմատեցին իրենց տարբերակը հեքիաթի իրական ավարտի հետ: Այնուհետև

կատարեցին անհատական աշխատանք՝ պատասխանելով հեքիաթի վերաբերյալ նախապես կազմված հարցերին :



«Փոքրիկ Կուղբը և Արձագանքը»

Little Beaver and the Echo

Ինչու՞ էր փոքրիկ Կուղբը միայնակ:
Why was Little Beaver lonely?

_____

Ո՞վ էր փոքրիկ Կուղբին հանդիպած առաջին կենդանին:
Who was the first animal Little Beaver met?

_____

Ո՞վ էր փոքրիկ Կուղբին հանդիպած երկրորդ կենդանին:
Who was the second animal Little Beaver met?

_____

Ո՞վ էր փոքրիկ Կուղբին հանդիպած երրորդ կենդանին:
Who was the third animal Little Beaver met?

_____

Ո՞վ էր շրջանաձև լողում:
Who was swimming circles all by himself ?

_____

Ո՞վ էր միայնակ ապրում:
Who was living all alone?

_____

Ո՞վ էր արձագանքը:
Who was the Echo?

_____

Հարցաթերթը լրացնելուց հետո էլեկտրոնային փոստով ուղարկեցին իմ էլեկտրոնային փոստին:

Դասին ակտիվ մասնակցեցին բոլոր աշակերտները: Կարելի է փաստել, որ վերոնշյալ միջառարկայական կապի կիրառման արդյունքում մեծացավ աշակերտների ներգարվվածությունը դասապրոցեսին, նրանց մոտիվացիան,

ավելին սովորելու, ստեղծագործական և մտավոր տեսանկյունից արտահայտվելու ցանկությունը:

Որպես տնային առաջադրանք հանձնարարեցի պատասխանել ներքոբերյալ հարցին՝ ձայնային հաղորդագրության կամ էլեկտրոնային նամակի տեսքով.

Why were they all happy at the end of the tale?

Ինչ՞ու էին հեքիաթի վերջում բոլորն ուրախ:

5-րդ «բ» դասարանում նույն թեման ուսումնասիրեցինք ավանդական մեթոդներով՝ առանց ՏՀՏ բաղադրիչի: Աշակերտները կարդացին հեքիաթը, վերլուծեցին, քննարկեցին գաղափարախոսությունը, կատարեցին բառաբանական և քերականական աշխատանքներ գրատախտակին և տետրերում:

Թեմայի ավարտին երկու դասարաններում էլ աշակերտները կատարեցին միևնույն թեստը:

Ընտրել ճիշտ պատասխանը.

Choose the correct answer.

1.Where did the Beaver live?

a) in a river b) in a swamp c) by the edge of a big pond

2. What was the Beaver crying?

a)He was lonely. b) He was happy. c) He had many friends.

3.First he saw a young _____ swimming in circles.

a) goose b)duck c)turtle

4.They were looking for someone who needed _____.

a) a boat c)some food d) a friend

5. They were all _____ at the end of the tale.

a) unhappy b)happy c) angry

Հայտորոշիչ թեստի արդյունքում ունեցանք հետևյալ պատկերը.



Ամփոփման ժամանակ պարզ դարձավ, որ 5-րդ «ա» դասարանում աշակերտներն ավելի լավ են յուրացրել թեման, բառապաշարը: Նկատվեց մեծ հետաքրքրություն դասանյութի վերաբերյալ: Իսկ 5-րդ «բ» դասարանում պատկերն այլ էր. ամփոփման ժամանակ աշակերտները պասիվ էին, դանդաղ էին պատասխանում հարցադրումներին:

Այսպիսով՝ «ԹԳՀԳ» և «Օտար լեզու» առարկաների միջև միջառարկայական կապերի հաստատումը թույլ է տալիս աշակերտներին կատարել.

- անհրաժեշտ տեղեկատվության որոնում և մշակում,
- տրված թեմայով տեսանյութերի, մուլտֆիլմերի, ֆիլմերի դիտում,
- բառաբանական և քերականական թեստերի կատարում՝ արդյունքների վերլուծությամբ,
- աուդիո ձայնագրությունների լսում,
- էլեկտրոնային նամակագրություն օտար լեզվով հաղորդակցվողների հետ:

ՏՀՏ գործիքները կարելի է օգտագործել դասի բոլոր փուլերում՝ նոր նյութի բացատրման, ամրապնդման ժամանակ, ամփոփման, նույնիսկ՝ տնային աշխատանքի հանձնարարման ժամանակ:

ՏՀՏ գործիքների միջոցով օտար լեզվի ուսուցման տեխնիկական հնարավորությունները շատ լայն են՝ մեխանիկական թարգմանությունից մինչև

սեփական խոսքի ձայնագրում և համեմատում լեզվակիրների արտասանության հետ:

Այսպիսով՝ ժամանակակից կրթական համակարգում գնալով ավելի շատ է շեշտը դրվում տեղեկատվության հետ աշխատանքի վրա: Աշակերտների համար անհրաժեշտություն է դառնում ինքնուրույն լրացուցիչ տեղեկատվության ձեռքբերումը, սեփական կարծիքի ձևավորման և եզրահանգումներ անելու կարողությունը: Օրեցօր ավելի հրատապ է դառնում օտար լեզվով տեղեկատվության հետ աշխատանքը : Այդ հարցում արդյունավետ և հարմար օգնական է համացանցը, քանի որ օտար լեզու սովորելու ժամանակ ինտերակտիվ շփման առկայությունը պարտադիր պայման է: Վերջերս օտար լեզվի ուսուցումը լայն տարածում է գտել համացանցի օգնությամբ: ՏՀՏ գործիքների կիրառմամբ օտար լեզվի ուսուցումը և այդ հարցում համացանցի կիրառումն այժմ ունի խթանիչ՝ հսկայական մոտիվացիոն ներուժ:

5. Եզրակացություն

Միջառարկայական կապերի հաստատումը, միանշանակ, խթանում է աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին, եթե իհարկե գործադրվում է ճիշտ ժամանակին և ինքնանպատակ չէ: Ուսուցիչը պետք է այնքան սահուն, ճշգրիտ ձևով զուգակցի միջառարկայական կապերը դասական ձևերի հետ, որպեսզի չշեղի աշակերտների ուշադրությունը դասի հիմնական նպատակներից:

Իմ ուսումնասիրության արդյունքում ես եկել եմ հետևյալ եզրահանգումներին.

- Օտար լեզվի դասավանդման գործընթացում միջառարկայական կապերի հաստատումը «մայրենիի» հետ ձևավորում է յուրացված լեզվական գիտելիքների կիրառման և հաղորդակցման հմտություններ և կարողություններ, բարելավում է քերականական նյութի յուրացումը:
- Կապը «Ես և շրջակա աշխարհը» առարկայի հետ ձևավորում է միջմշակութային իրազեկության և բազմազանության նկատմամբ հարգալից վերաբերմունք:
- «ԹԳՀԳ» առարկայի հետ միջառարկայական կապի հաստատումը խթանում է ինքնուրույն ուսումնառության և ինքնազարգացման կարողություններ:Ապահովում է բոլոր աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին:

Այսպիսով՝ քանի, որ անգլերենն այսօր համարվում է «վեբ» լեզու, «դարի պահանջ», իսկ համացանցն արդեն իսկ առկա է մարդկային կյանքի բոլոր ոլորտներում, անհրաժեշտ է անընդհատ ընդլայնել գիտելիքները և գործնական հմտությունները թե՛ անգլերենի ուսումնասիրության և թե՝ ՏՀՏ ոլորտներում:

6. Առաջարկություն

Անհերքելի է ՏՀՏ գործիքների կիրառման կարևորության և արդյունավետության իրողությունը մեր օրերում, հետևաբար առաջարկում եմ երգերի,խաղերի, տեսանյութերի միջոցով «համեմել» դասը՝ մատուցվող նյութն ավելի հեշտ ընկալելի և պատկերավոր դարձնելու համար:

Բոլոր աշակերտների ներգրավվածությունն ապահովելու համար պետք է ՏՀՏ կիրառել ոչ միայն դասարանական, այլև՝ արտադասարանական գործունեության ընթացքում: Առաջարկում եմ հաճախակի հանձնարարել այնպիսի տնային առաջադրանքներ, որոնք հնարավոր է կատարել համակարգչով և ուղարկել ուսուցչին էլեկտրոնային փոստով: Այս տարբերակով աշակերտները ոգևորությամբ կկատարեն անհետաքրքիր և ձանձրալի թվացող աշխատանքները:

Օգտագործված գրականության ցանկ և հղումներ

«Օտար լեզուներ» ուսումնական բնագավառի փորձնական չափորոշիչ և ծրագրեր (2-12-րդ դասարաններ)

«Հանդես» գիտական հոդվածների ժողովածու, «Վան Արյան», 2016, 284 էջ

«101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար», Բուդապեշտ, 2006

«Ուսուցման արդյունավետ հնարներ», Ս. Խաչատրյան, Հայաստան, 2020

ԿԶՆԱԿ,Անգլերեն 5,Ուսումնական նյութեր (երկրորդ կիսամյակ), Անահիտ Խոսրովյան

ԿԶՆԱԿ, Անգլերեն 5, Ուսումնական նյութեր, Ուսուցչի ձեռնարկ

https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Otar%20lezuner/2009%284-5%29.pdf

https://krtahartak.am/courses/obligatory/course-014/lessons/

https://pozdravish.ru/hy/pochemu-luchshe-izuchat-angliiskii-yazyk-cherez-internet-start-v/

http://ysu.am/files/otar-lezvi-dasavandman.pdf